

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի
«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի
Հանրապետական փուլ
8-րդ դասարան - 120 րոպե

N 1-4

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ
(0,5 x 4 = 2 միավոր)

1. Ո՞ր թագավորն է հարել կաթոլիկ ֆրանցիսկյան միաբանությանը. *(0,5 միավոր)*
- 1) Լևոն Ա.
 - 2) Հեթում Բ.
 - 3) Լևոն Բ.
 - 4) Հեթում Ա.
2. Ի՞նչ է կոչվում հոգևոր աստիճանների ամբողջական համակարգը. *(0,5 միավոր)*
- 1) Հոգևորականություն
 - 2) Վանականություն
 - 3) Նվիրապետություն
 - 4) Քահանայություն
3. Հայաստանում հանդիպելով որտե՞ղ են գիշերում Ս. Բարդուղիմեոս և Ս. Թադեոս առաքյալները. *(0,5 միավոր)*
- 1) Գողթն գավառում
 - 2) Ս. Թադեի վանքում
 - 3) Վաղարշապատում
 - 4) Օթյաց Խաչ վայրում
4. Հայոց եկեղեցին ե՞րբ է նշում Սրբոց Վարդանանց տոներ. *(0,5 միավոր)*
- 1) Բուն Բարեկենդանին նախորդող օրը
 - 2) Բուն Բարեկենդանին հաջորդող օրը
 - 3) Բուն Բարեկենդանին հաջորդող հինգշաբթի օրը
 - 4) Բուն Բարեկենդանին նախորդող հինգշաբթի օրը

11. Իրադարձությունը համապատասխանեցնել տարեթվին.

(1 միավոր)

- 1. Կաթողիկոսական աթոռի տեղափոխումն Աղթամար
Հովհաննես Ե. Դրասխանակերտցու կողմից ա. 1896 թ.
- 2. Նարեկավանքի ավերումը քրդական ավազակախմբերի կողմից բ. 1292 թ.
- 3. Խաչիկ Բ. Անեցու հռչակումը Հայոց կաթողիկոս գ. 1058 թ.
- 4. Անիի Մայր տաճարի շինարարության ավարտը դ. 1203 թ.
- 5. Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանության
ավարտը ե. 1001 թ.

1	
2	
3	
4	
5	

N12-13

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. «Ձեր Տեր Հիսուս Քրիստոս աղքատների հետ էր ապրում և համեստ զգեստներ էր կրում, իսկ դու շքեղ հագուստներով ու ոսկեզօծ մորուքով ես ներկայացել»:

1. Ու՞մ խոսքերն է մեջբերել պատմիչը:

(1 միավոր)

2. Ու՞մ մասին է խոսքը:

(1 միավոր)

13. «Բնավորությամբ բարի էր նա, աղքատների ու կարոտյալների հանդեպ ողորմած, եկեղեցու ու Աստծո սպասավորների նկատմամբ սիրալիր: Վանքեր էր հաստատում իր տերության բոլոր կողմերում»:

1. Ու՞մ աշխատությունից է մեջբերումը:

(1 միավոր)

2. Ու՞մ մասին է խոսքը:

(1 միավոր)

N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն
պահանջող առաջադրանքներ:

N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՞մ անունն է ավելորդ: *(0,5 միավոր)*
Թեյշեբա, Հերա, Խալդի, Խուբա, Շիվինի:

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ: *(0,5 միավոր)*

Ապաշխարություն, Պսակ կամ Ամուսնություն, Պահք, Ձեռնադրություն, Ս. Հաղորդություն:

N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

- ա. Ավետում, Սուրբ Ծնունդ, Տյառնընդառաջ
 - բ. Տյառնընդառաջ, Սուրբ Ծնունդ, Վարագա Սուրբ Խաչ
 - գ. Սուրբ Աստվածածնի Վերափոխում, Համբարձում, Ավետում,
-

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: *(1 միավոր)*

- ա. Ս. Արիստակես, Ս. Վրթանես, Ս. Սահակ Պարթև
 - բ. Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Հուսիկ, Ս. Հովհան Ծանեցի
 - գ. Ս. Վրթանես, Ս. Ներսես Մեծ, Ս. Ներսես Շնորհալի
-

N 16

1. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: *(2 x 0.5 = 1 միավոր)*

- 1) Օշին թագավորը և Կոստանդին Գ. կաթողիկոսը մի քանի համախոհների հետ Սիս քաղաքում 1317 թ. նոր ժողով են գումարում:

- 2) Բարսեղ Ա. կաթողիկոսը 1090 թ. այցելում է սելջուկյան տերության գահակալ Մելիք Ա. շահին, արժանանում հանդիսավոր ընդունելության:
- 3) 1203 թ. Գրիգոր Զ. Ապիրատի մահով ավարտվեց Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանությունը:
- 4) Սսի և Ադանայի ժողովներին մասնակցել են Հայաստանի և հայաբնակ շրջանների եպիսկոպոսական թեմերի առաջնորդների մեծ մասը:
- 5) Խաչիկ Բ. կաթողիկոսի կարևոր ձեռնարկներից էր Անտիոքում և Կիլիկիայի Տարսուն քաղաքում հայկական թեմերի հիմնումը:

2. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ:

(2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Տերունական տոներ են նաև բոլոր կիրակի օրերը:
- 2) Տնօրինեքի ժամանակ քահանան օրհնում է տան ջուրը, հացը և գինին:
- 3) Զրօրհնեքի արարողության ժամանակ ջրի մեջ հեղվող Ս. Մյուռնը խորհրդանշում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը:
- 4) Կարիքավորների համար թողնված բերքն անվանվում է ճոաքաղ:
- 5) Ավագ շաբաթվա իրադարձությունները ներկայացնում են Քրիստոսի Ծննդյան պատմությունը:

N 17

Շարադրանք

(2 միավոր)

Ներկայացրե՛ք Հայոց եկեղեցու վիճակը Կիլիկյան հայկական թագավորության անկումից հետո: Բացատրե՛ք և հիմնավորե՛ք կաթողիկոսական աթոռի՝ Ս. Էջմիածին տեղափոխման անհրաժեշտությունը: